Հավելված

ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 30-ի N 1759 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Համաձայն սույն կարգի՝ տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կամ տնտեսական գործունեությանն առնչվող ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն ձևի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում նշված՝ ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող պետական մարմինները (այսուհետ՝ ստուգում իրականացնող մարմին), որոնք իրականացնում են՝

1) տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն ուղղված (համալիր) ստուգումներ.

2) գործունեության առանձին տեսակի իրականացման լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեության ստուգումներ։

2. Սույն կարգի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ստուգում իրականացնող մարմինները տեղեկությունները ներկայացնում են միայն տնտեսավարող սուբյեկտների կողմից առանց համապատասխան լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքերի վերաբերյալ։

3. Սույն կարգի դրույթները չեն տարածվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն ուղղված (թեմատիկ) ստուգումներ իրականացնող մարմինների վրա՝ բացառությամբ սույն կարգի 2-րդ կետում նշված դեպքի։

4. Ստուգում իրականացնող մարմինը հաշվետու ամսում իրականացրած համալիր ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնում է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ սույն կարգի 2-րդ կետում նշված դեպքում տեղեկությունները ներկայացվում են այդպիսի փաստն արձանագրվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում։

5. Սույն կարգով նախատեսված՝ ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ MS Excell («Էմ Էս Էքսելլ») ֆայլով։

6. Ներկայացվող տեղեկություններն ստորագրվում են տվյալ պետական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կամ նրան փոխարինող անձի կողմից՝ էլեկտրոնային ստորագրությամբ։

7. Սույն կարգով սահմանված տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրվում են անվճար։

8. Սույն կարգին համապատասխան ստացված տեղեկություններն օգտագործվում են բացառապես ծառայողական նպատակներով և հրապարակման ենթակա չեն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

20 _____ ԹՎԱԿԱՆԻ _____ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I.	Տեղեկություններ ներկայացնող մարմնի անվանումը	
II.	ՀՎՀՀ-ն	
III.	Հեռախոսահամարը	
IV.	Ամսաթիվը	

NN ը/կ	Ստուգված										Ստուգման ակտի համարը	Ստուգման ակտի կազմման ամսաթիվը	Ստուգված ժամանակաշրջանը	Իրավական նորմերը, որոնց պահանջը չի կատարվել	Ծանոթագրություն
	կազմակերպության			անհատ ձեռնարկատիրոջ, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի											
	անվանումը	ՀՎՀՀ-ն	հաշվառման վայրը	անունը	ազգանունը	հայրանունը	հաշվառման վայրը	անձնագրային տվյալները	սոցիալական քարտի համարը (արկայության դեպքում)	ՀՎՀՀ-ն					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16